

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն,
տնտեսագիտության դոկտոր



Դ.Վ.Հարությունյան
01 դեկտեմբերի 2022թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Աստղիկ Գևորգի Պողոսյանի «Ֆինանսական վերահսկողության հիմնախնդիրները ՀՀ բուհերում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.03. – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Դավիթ Հարությունյան՝ տնտեսագիտության դոկտոր, Մերի Մանուչարյան՝ տնտեսագիտության թեկնածու, Եվգենյա Հակոբյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Ռոբերտ Սարինյան՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., Աշոտ Մարկոսյան՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆ., Բելլա Գաբրիելյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Գրիգոր Մանուկյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Գևորգ Հարությունյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Տաթևիկ Փարսադանյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Շողեր Պողոսյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Ստեփան Պապիկյան՝ տեխնիկ.գիտ.թեկնածու:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կատարելով հասարակության համար չափազանց կարևոր գործառույթ և ձևավորելով որակյալ մարդկային կապիտալ՝ համալսարանների մեծ մասը, պետական աջակցությանը զուգահեռ, գործունեություն են ծավալում նաև առևտրային սկզբունքներով, ինչի արդյունքում էլ բուհերում պարբերաբար վերանայվում է ֆինանսական վերահսկողության գործառույթների շրջանակը: Եթե նախկինում վերահսկողության հիմնական գործառույթը բուհի ֆինանսական ռեսուրսների ժամանակին հավաքագրման և ըստ նպատակայնության ծախսման մշտադիտարկումն

էր՝ կանխարգելելու հնարավոր չարաշահումներն ու դրամական միջոցների անարդյունավետ օգտագործումը, ապա ներկայումս կարևորվում են նաև ֆինանսական վերահսկողության վերլուծական գործառույթները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կազմակերպություններում ֆինանսական վերահսկողությունն արդյունավետ է կիրառվում հատկապես այն դեպքերում, երբ իրականացվում է ըստ պատասխանատվության կենտրոնների բյուջետավորում: Սակայն, պետք է արձանագրել, որ ՀՀ բուհերում բյուջետավորումն իրականացնելիս ծախսային և եկամտային նախահաշիվները սահմանվում են համաբուհական կտրվածքով և չեն ներկայացվում ըստ առանձին պատասխանատու գիտակրթական գործունեություն ծավալող ստորաբաժանումների: Վերջինս իր հերթին նվազեցնում է ֆինանսական հաշվետվողականության աստիճանը, ինչպես նաև բուհերում վերահսկողության համար անբարենպաստ շեղումների արձանագրման, բացահայտման և կանխարգելման խոչընդոտներ ստեղծում՝ ըստ առանձին գիտակրթական պատասխանատվության կենտրոնների: Ուստի, արդիական է համարվում պատասխանատվության կենտրոններով ֆինանսական վերահսկողության կազմակերպումը բուհերում, ու, դրան զուգահեռ, ֆինանսական նախահաշիվների հաշվետվողականության արդյունավետ համակարգի ներդրումը: Վերջինով էլ պայմանավորված է ընտրված թեմայի հրատապությունն ու արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ՀՀ բուհերի ֆինանսական վերահսկողության գործող մեխանիզմները՝ վերհանելով դրանց բարելավման ուղիները: Սույն նպատակի իրագործման համար ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել համալսարանների ֆինանսավորման միջազգային առաջավոր փորձը և ներկայացնել ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթության ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման հնարավորությունները,
- դրամական միջոցների փաստացի ձևավորման չափերի և դրանց առնչվող սահմանված նպատակադրումների իրագործելիության փաստացի արդյունքների համադրումներով մշակել ֆինանսական ռեսուրսների ձևավորման ներքին վերահսկողության գնահատման համակարգ,
- ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման գործընթացը դիտարկել ֆինանսական վերահսկողության տեսանկյունից՝ առաջարկելով կրեդիտների շարժունության դրամային փոխակերպման համակարգ,

- մշակել ըստ պատասխանատվության կենտրոնների գիտակրթական գործունեության անբարենպաստ ֆինանսական շեղումների բացահայտման և կառավարչական հաշվառման տեղեկատվական համակարգ,
- անընդհատության սկզբունքով ներկայացնել ներբուհական ֆինանսական հաշվետվողականության կազմակերպում՝ նպատակ ունենալով կանխարգելիչ բուհի ֆինանսական ռիսկերի ձևավորումը՝ ըստ գիտակրթական գործունեության պատասխանատվության կենտրոնների,
- մշակել ֆինանսական ներքին վերահսկողության որակի վարկանիշային գնահատման համակարգ և ներկայացնել բուհի ստորաբաժանումներում ֆինանսական վերահսկողության թույլ և ուժեղ կողմերի բացահայտման մեթոդաբանություն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության ընթացքում իրականացված վերլուծությունների հիման վրա ստացվել են տեսական և կիրառական բովանդակության գիտական արդյունքներ, որոնցից գիտական նորույթ հանդիսացողները հետևյալներն են.

- ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման գործընթացը դիտարկելով ֆինանսական վերահսկողության կտրվածքով՝ առաջարկվել է կրեդիտների արժեքային փոխակերպման համակարգ՝ ուսանող-ակադեմիական հենքով ներկայացնելով հաշվարկային դրամական ներհույքեր և արտահույքեր,
- դրամական միջոցների ձևավորման և դրանց առնչվող սահմանված նպատակադրումների իրագործելիության փաստացի արդյունքների համադրումներով առաջարկվել է ֆինանսական ռեսուրսների օգտագործման վերահսկողության գործակցային շեղումների գնահատման համակարգ՝ ներքին վերահսկողության գործառույթների շրջանակում մշտադիտարկմանը զուգահեռ կիրառելով նաև վերլուծական գնահատումներ,
- առաջարկվել է ըստ պատասխանատվության կենտրոնների գիտակրթական գործունեության անբարենպաստ դրամական շեղումների բացահայտման հաշվապահական հաշվառման տեղեկատվական համակարգ՝ հնարավորություն ստեղծելով բուհերում իրականացնելու ներկառավարչական հաշվետվողականության կազմակերպում և, դրանով իսկ անընդհատության սկզբունքով կանխարգելիչ ֆինանսական ռիսկերի ձևավորումը,
- մշակվել է ֆինանսական ներքին վերահսկողության որակի վարկանիշային գնահատման համակարգ, որով բուհի առանձին ստորաբաժանումներում իրականացվող ֆինանսական վերահսկողության արդյունավետությունը

դիտարկվում է կազմակերպչական տեսանկյունից՝ շեշտադրելով վերահսկողական կանխարգելիչ, կարգավորիչ և վերլուծական գործառույթներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է հետազոտվող թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են հետազոտության գիտական արդյունքները և նորույթները, դրանց տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև դրանց փորձարկումն ու հրապարակումները:

Ատենախոսության առաջին՝ «Ֆինանսական համակարգի գործունեության առանձնահատկությունները համալսարաններում» գլխում ներկայացված են ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի զարգացման միտումները, ինչպես նաև քննարկված են ֆինանսական վերահսկողության գործառույթների բարելավման հիմնախնդիրները ՀՀ բուհական համակարգում:

Ատենախոսության երկրորդ՝ «Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման վերահսկողության շրջանակը բուհերում» գլխում ներկայացված են ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման վերահսկողության հիմնախնդիրները, կրթավճարների ձևավորման ֆինանսական վերահսկողության մոտեցումները բուհերում, ինչպես նաև վերլուծված են ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման ֆինանսական վերահսկողության հիմնախնդիրները:

Ատենախոսության երրորդ՝ «Ֆինանսական վերահսկողության կազմակերպման կատարելագործման ուղիները բուհերում» գլխում ներկայացված են բուհական համակարգում ներքին աուդիտի կազմակերպման, ֆինանսական տեղեկատվական հոսքերի կառավարչական հաշվառման ներդրման հիմնախնդիրները, ինչպես նաև ըստ պատասխանատվության կենտրոնների վերահսկողության մեխանիզմների ներդրման շրջանակը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ, որոնք ամփոփված են ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունն իր դրական արժանիքներով հանդերձ զերծ չէ նաև որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

- Ատենախոսությունում թերություններով է նկարագրված և հիմնավորված թեման: Հետազոտության օբյեկտը, կախված հանրային և/կամ պետական լինելու հանգամանքից, վերահսկողության տեսանկյունից ունեն ներքին վերահսկողության տարբերվող մոդելներ:
- հեղինակն առաջարկում է ակադեմիական կրեդիտների կուտակաման և փոխանակման գործընթաց, առաջարկելով կրեդիտների արժեքային փոխանակման համակարգ՝ ուսանող-ակադեմիական հենքով ներկայացնելով հաշվարկային դրամական ներհոսքեր և արտահոսքեր, սակայն, եթե դրա հիմնավորումն աշխատանքի 69-րդ էջում ներկայացված հաշվարկային մեխանիզմի արդյունքում կրեդիտի արժեքն է համալսարանից համալսարան տեղափոխվելու սցենարային մոդելում, ապա կարող ենք ասել, որ ուսանող-ակադեմիական կրեդիտ ասվածը, մեր կարծիքով տեղին չէ, այն պարզապես համալսարանից համալսարան տեղափոխման հաշվարկում վճարների տարբերությունն է, որն առաջանում է համալսարանից համալսարան տեղափոխվելով: Այսինքն, հենքը համալսարան-համալսարանն է, իսկ ուսանողը հաշվարկման մեխանիզմում իր դերակատարությունը և ազդեցությունը չի կարող ունենալ ուղղակիորեն:
- հեղինակի կողմից առաջարկվել է բուհերում ներդնել ներկառավարչական հաշվետվողական համակարգ և դրանով իսկ անընդհատության սկզբունքով կանխարգելելու ֆինանսական ռիսկերի ձևավորումը: Քանի որ հաշվետվողականությունը պարբերական ընթացակարգ է, ապա, մեր կարծիքով, այն անընդհատության սկզբունքում դիտարկելը տեղին չէ:
- Ատենախոսությունում բյուջետավորման իրականացման համար օգտագործված է «Կաթսայական եղանակ» եզրույթը, որը չի բացատրվում, թե ինչ է իրենից ներկայացնում կամ որ հեղինակի կողմից է այն կիրառվել, ներդրվել մասնագիտական և/կամ գիտական գրականության մեջ:
- Էջ 3-ի առաջին պարբերությունում «Հետազոտական թեմայի արդիականությունը»-ում հեղինակը բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների շահառուներ է ներկայացնում պետությունը, համալսարանի վարչակազմը, ուսանողությանը և գործատուներին, սակայն այս մասով նշենք, որ նախ նպատակային ծախսերը չեն սահմանափակվում միայն համալսարանների վարչակազմի շահով, իսկ գործատուների հետ մեծ հաշվով կապ չեն ունենում:
- Աշխատանքի գլուխ 2.1-ը (էջ 19)՝ Մասնագիտական կրթության համակարգի ֆինանսավորման միջազգային առաջավոր փորձի ներդրման

ուղիները ՀՀ-ում, մեկնաբանվում է, որ ՀՀ-ում ուսուցման ֆինանսավորումն իրականացվում է պետական ֆինանսավորմամբ և ուսանողների անձնական միջոցներով և որպես առաջավոր օրինակ վարկավորման հետ կապված նշվում է ԱՄՆ օրինակը: Սակայն ՀՀ-ում առկա է ուսանողական վարկերի ներդրված գործող և կայուն այնպիսի համակարգ, ըստ որի ուսանողը վարկավորվում է տրանշերով (մասերով), վարկի մայր գումարը վճարում է ուսումն ավարտելուց հետո, իսկ կախված առաջադիմությունից կատարվում է սուբսիդավորում՝ գերազանց առաջադիմության համար 3%-ի չափով, իսկ միջին և ցածր առաջադիմության դեպքում՝ 2%:

- Աշխատանքի 23-րդ էջի 2-րդ պարբերությունում, ՀՆԱ-ում պետական ֆինանսավորման մասնաբաժիններ է դիտարկված Հայաստանի և զարգացած երկրների միջև, սակայն թվական տվյալների աղբյուրները նշված չեն: Նույն էջում հեղինակը գտնում է, որ բուհերը չպետք է դիտարկվեն որպես հարկման օբյեկտ, սակայն բուհերը որոշ դեպքերում ազատված են ԱԱՀ վճարելուց, իսկ աշխատավարձերի մասով առկա է հարկման համահավասար համակարգ, ինչպես որ բոլոր պետական համակարգերում: Հետևաբար, մեր կարծիքով, հարկումը տեղին է բուհերի այնքանով, որքանով որ կիրառվում է:
- Աշխատանքի Ֆինանսական վերահսկողության գործառույթների բարելավման հիմնախնդիրները ՀՀ բուհական համակարգում 1.3 ենթագլուխը վերաբերում է ֆինանսական վերահսկողության գործառույթին, սակայն ենթագլխում սահմանված չէ ինչ է ֆինանսական վերահսկողությունը:
- Աշխատանքում նշում է, որ ֆինանսական հաշվետվությունների աուդիտը նաև հնարավորություն է տալիս կարծիք արտահայտելու, սակայն նշենք, որ դա հենց միջոցն է, որով կարծիքի արտահայտման ձևով ի ցույց է դրվում ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը և որ բոլոր էական առումներով գերծ են կանխակալությունից (ԱՄՍ 200, պարագրաֆ 3): Ինչպես նաև ատենախոսության հեղինակը, նշում է որ աուդիտորը կարծիք է արտահայտում, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով կազմված են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան: Սակայն վերջինս սխալ է ձևակերպված, քանի որ աուդիտորը կարծիք է արտահայտում առ այն, որ բոլոր էական առումներով համապատասխանում են ֆինանսական

հաշվետվողականության կիրառելի հիմունքներին (ԱՄՍ 200, պարագրաֆ 3):

- Աշխատանքի 64-րդ էջում դիտարկում է կատարվում կոնկրետ համալսարան դիմելու ֆինանսական նպատակահարմարությանը և կրթավճարը դիտարկում է որպես «Կորցրած ֆինանսական եկամուտներ»: Այս մասով հեղինակը աշխատանքում քննարկում է սպասվելիք իրադարձություն, որը հստակ չափելի չէ, իսկ բանկային ավանդի հետ համեմատելով որպես համեմատական մեծություն տեղին կլիներ հավանականության տեսությամբ հեղինակի կողմից առաջ քաշվեր հանավանական թեզը ասվածը հիմնավորելու համար:
- Աշխատանքի 3-րդ գլուխի 3.1 ենթագլուխը բնութագրված է «Ներքին աուդիտի կազմակերպման հիմնախնդիրները բուհական համակարգում», սակայն ենթագլխում չի ներկայացնում այն, որ ՀՀ-ում առկա են և՛ պետական, և՛ մասնավոր բուհեր, որոնց մասով ներքին աուդիտը կարգավորվում է տարբեր իրավակարգավորումներով և ստանդարտներով: Նշվածի մասով ուսումնասիրություն արված չէ:
- Աշխատանքում առկա են իրավական ակտերին և ստանդարտներին հղումներ, որոնք ներկայում ուժը կորցրած են ճանաչվել, մասնավորապես՝ 75-րդ էջում կատարված հղումը վերաբերում է 26.12.2002թ. «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-512-Ն) 7-րդ հոդվածին, սակայն այդ օրենքը ուժը կորցրած է ճանաչվել, իսկ ներկայում գործում է «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքը, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2019թ.-ի դեկտեմբերի 4-ին (ՀՕ-283-Ն), 78-րդ էջի 2-րդ պարբերությունում հեղինակը հղում է կատարում ՀՀ կառավարության 21.04.2005թ.-ի N-509-Ն որոշմամբ հաստատված ԱՍ 610-ին, սակայն նախ այդ որոշմամբ հաստատված ստանդարտներն ուժը կորցրած են ճանաչվել ՀՀ կառավարության 05.12.2019թ.-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1931-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 21-ի N 509-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1723-Ն որոշմամբ: Բացի այդ 610 ստանդարտը նախկին, ինչպես նաև ներկայում IAASB -ի կողմից հրապարակված ԱՄՍ 610 -ը, չի վերաբերում ներքին աուդիտի գործունեությանը, այլ այն վերաբերում է արտաքին աուդիտի կողմից ներքին աուդիտի աշխատանքի օգտագործմանը, և ստանդարտն էլ

անվանվում է «ԱՄՍ 610-Ներքին աուդիտորների աշխատանքի օգտագործումը»:

- 79-ում նշվում է, որ «Ներքին աուդիտի նպատակները որոշվում են ղեկավարության և, անհրաժեշտության դեպքում, կառավարման պարտականություններ կրողների կողմից»: Այս մասով, եթե կառավարման պարտականություններ կատարող անձի կողմից է որոշում կայացվում ներքին աուդիտի նպատակների վերաբերյալ, ապա առաջանում է շահերի բախում, ինչը ներքին աուդիտի ստանդարտների, վերջինիս գործառույթների հետ առաջացնում է հակասություն, հետևաբար՝ շարադրանքը սխալ է:
- Էջ 90-ում «Ֆինանսական տեղեկատվական հասքերի կառավարչական հաշվառման ներդրման հիմնախնդիրները» 3.2 ենթագլխի 2-րդ պարբերությունում ներկայացվում է ըստ պատասխանատվության կենտրոնների՝ ֆինանսական հոսքերի շեղումների հաշվառման համար առաջարկում ենք բուհերում ըստ պատասխանատվության կենտրոնների հաշվապահական հաշվառում կազմակերպել: Սակայն, հետևյալ հանգամանքների դիտարկման դեպքում հեղինակը չէր հանգի այդ մտքին. ՀՀ-ում հաշվապահական հաշվառումն իրականացվում է ՀՀ ֆինանսների նախարարի 17.04.2012թ. «Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը և դրա կիրառման հրահանգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2000 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 319 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 353-Ն հրամանով հաստատված հրահանգի համաձայն, որով սահմանված է հաշիվների թղթակցությունները սինթետիկ և անալիտիկ հաշիվներով, իսկ ֆինանսական հոսքերի համար լրացուցիչ հաշիվներով կառավարելու համար ընդամենը պետք է բացել անալիտիկ հաշիվներ:
- 6-րդ եզրահանգմանը հեղինակը այդ կերպ չէր հանգի, եթե աշխատանքում հետազոտված և ուսումնասիրված լինել ՀՀ-ում մասնավոր ու պետական բուհերի տարբերությունները: Պետական վերջիններս ըստ իրենց տեսակների իրավակարգավորման առումով ներքին աուդիտի իրականացման համար առաջնորդվում են հանրային հատվածի ներքին աուդիտի իրավական ակտերով, ստանդարտներով, իսկ մասնավոր հատվածում՝ IIA-ի կողմից հրապարակված ներքին աուդիտի ստանդարտներով: Այս ամենը դիտարկելու արդյունքում,

հեղինակը հավանական է կանդորադառնար նաև ներքին աուդիտի տարեկան աշխատանքների պլանին, ռազմավարությանը, կկառուցեր ֆինանսական վերահսկողության այլ մոդել և, կարծում ենք, եզրահանգումն այդ կերպ չէր ներկայացվի:

- 9-րդ եզրակացությունում ներկայացված է ֆինանսական ներքին վերահսկողության որակի վարկանշման գնահատման մոտեցում, սակայն որակի լավ կամ վատ գնահատականը դեռևս չի նշանակում հավանական կամ պոտենցիալ կորստի բացառում կամ ռիսկի զսպում: Հետևաբար այս մասով տեղին կլիներ, որպեսզի հեղինակը վերահսկողության տեսանկյունից առաջարկեր ռիսկի գնահատումներ, որով ի ցույց կդրվեր հավանական և պոտենցիալ կորստի հավանականության մեծությունը, մակարդակը, կշիռը և այլն:
- Բացի վերը շարադրված դիտողություններից, ատենախոսությունում նկատվել են նաև հետևյալ **տեխնիկական թերություններ**, մասնավորապես. աշխատանքի էջ 53-ի Աղյուսակ 2.1.2-ում «Ֆինանսական ռեսուրսների օգտագործման ուղիներ»-ը դրամային արտահայտությամբ չեն, օրինակ շրջանավարտների թողարկում, սակայն աղյուսակի վերնագրում չափման միավորը նշված է մլն ՀՀ դրամ: Հետևաբար աղյուսակը ճշտումներ անելու կարիք ունի: Իսկ 59-րդ էջի Գծապատկեր 2.2.2-ում նշված չէ, թե ցուցանիշները որ տարվա համար են պատկերված: 60-րդ էջի Բանաձև 2.2.1-ում, էջ 71-ում Բանաձև 2.3.3, Բանաձև 2.3.4 և այլն աղբյուրներին հղում կատարված չէ: Աշխատանքի 92-րդ էջի Աղյուսակ 3.2.1-ում արտացոլված ցուցանիշների համար ներկայացված չէ, թե որ բուհի ցուցանիշներն են և աղբյուրը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ելնելով նշված դիտողություններից, կարող ենք եզրակացնել, որ աշխատանքն ունի թերություններ, որոնք որոշակի կերպով ազդում են թեկնածուական ատենախոսության գիտագործնական նշանակության վրա: Դրական եզրակացության համար կարող է հիմք հանդիսանալ այն փաստը, որ Աստղիկ Գևորգի Պողոսյանի «Ֆինանսական վերահսկողության հիմնախնդիրները ՀՀ բուհերում» թեմայով ատենախոսությունը ներկայանում է որպես ավարտուն հետազոտություն, ուղղված ՀՀ բուհական համակարգում ֆինանսական վերահսկողական նպատակադրումների և կազմակերպչական գործառույթների բարելավմանը: Հեղինակի գիտագործնական ընդհանրացումները, եզրակացությունները և առաջարկները կարող են նպաստել

բուհերում իրականացվող ֆինանսական գործառույթների արդյունավետության բարձրացմանը:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 7 գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին և ունեն բավարար ընդգրկունություն:

Այսպիսով՝ Աստղիկ Գևորգի Պողոսյանի «Ֆինանսական վերահսկողության հիմնախնդիրները ՀՀ բուհերում» թեմայով ատենախոսության և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 7 հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակը արժանի է Ը.00.03. – «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (01.12.2022թ., արձանագրություն թիվ 33):

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
ավագ գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու**



Շ. Պողոսյան

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու**



Է. Մաթևոսյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու Շ. Պողոսյանի և նույն ինստիտուտի գիտաշխատող տնտեսագիտության թեկնածու Է. Մաթևոսյանի ստորագրությունների իսկությունը «հաստատվում են»:

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ. քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու,**

«01» դեկտեմբերի, 2022թ.

Կ. Տ.



Ե. Ա. Հակոբյան